բավարարման, Դատարանը գտնում է, որ Դատարանի 13.11.2025թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը ենթակա է պահպանման մինչև վճռի կատարումը, այնուհետև ենթակա է վերացման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ՄԵԾՆ ԷՐԻԿ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ «ՄԵԾՆ ԷՐԻԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Գուրգեն Եղիազարյանի 03.11.2025թ. կայացրած N 07-2025 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել «ՄԵԾՆ ԷՐԻԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Գուրգեն Եղիազարյանի 03.11.2025թ. կայացրած N 07-2025 որոշումը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «ՄԵԾՆ ԷՐԻԿ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Դատարանի 13.11.2025թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը, այնուհետև՝ վերացնել:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE5C-6DBE-4768-A96C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am